ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2022/23

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Բողոք բերող՝ «Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ

Համանման բողոք բերող՝ «Սևանի հացի գործարան» ՓԲԸ

Մասնակցությամբ՝

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ՝ Ի. Օսիպյանի, Գ. Մուրադյանի, Ա. Համբարձումյանի,

«Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Մ. Աթոյանի,

«Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ա. Ավետիսյանի, ներկայացուցիչ՝ Լ. Բրսոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 23.02.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից

փաստաթղթերը, «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն 1) կողմից 07.03.2022թ.-ին ներկայացված համանման բողոքը (այսուհետ նաև՝ համանման բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. դադարեցնել Երևանի քաղաքապետարանի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման մրցույթը:
2. պարտավորեցնել Պատվիրատուի գնահատող հանձնաժողովին հայտարարել նոր մրցույթ:

Ընկերություն 1-ը, ներկայացրած համանման բողոքով, Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել Հանձնաժողովին չեղյալ հայտարարել 9-րդ, 10-րդ և 45-րդ չափաբաժինների մասով մրցույթը, կամ
2. Պարտավորեցնել Հանձնաժողովին ընդունված համարել «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից թիվ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված փաստաթղթերը և գնահատել ներկայացված հայտը:

Բողոքներ քննող անձին «Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 17.02.2022թ.-ին:

Բողոքներ քննող անձի 21.02.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/3045-2022 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Բողոքաբերը 23.02.2022թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

23.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/23 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձին «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը մակագրվել է 02.03.2022թ.-ին:

Բողոքներ քննող անձի 03.03.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/3729-2022 գրությամբ համանման բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերություն 1-ը 07.03.2022թ.-ին ներկայացրել է համանման բողոքի շտկված տարբերակը:

09.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված համանման բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/23 համարի ծածկագիրը:

03.03.2022թ.-ին, 11.03.2022թ.-ին և 25.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.03.2022թ.-ին:

2. «Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ-ն 23.02.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքի առարկան՝ 03.02.2022թ Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ- 22/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթ: 12.02.2022թ-ին իմ կողմից պարզաբանում է պահանջվել հրավերի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ: Պարզաբանումը ուղարկվել է Պատվիրատուի կողմից 15.02.2022 թվականին՝ հրավերով պարազաբանման համար նախատեսված ժամկետի խախտմամբ: «Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում»: Բանկի կողմից հայտի ապահովման կապակցությամբ նիստ էր նշանակված 15.02.2022թ ժամը 10:00-ին: Պատվիրատուի ժամկետային ոչ ճիշտ աշխատանքի պատճառով Ա/Ձ Արփինե Ռազմիկի Կարապետյանը չի կարողացել մասնակցել նիստին, քանի որ գնային առաջարկի ձևավորումը կախված էր Պատվիրատուի պարզաբանումից: Հաշվի առնելով վերը նշվածը Ա/Ձ Արփինե Ռազմիկի Կարապետյանը կարող է մասնակցել միայն այն չափաբաժիններին, որոնք չեն պահանջում հայտի ապահովում: Այստեղ խախտվում է նաև մրցակցության իրավունքը:

Համաձայն հրավերի I մասի 3.1 կետի, ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի՝

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում»:

Ելնելով վերոգրյալից՝ «Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. դադարեցնել Երևանի քաղաքապետարանի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման մրցույթը:

2. պարտավորեցնել Պատվիրատուի գնահատող հանձնաժողովին հայտարարել նոր մրցույթ:

3. <u>«Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ն 07.03.2022թ.-ին ներկայացրած համանման բողոքով հայտնել է հետևյալը.

«1. 03.02.2022թ. Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ նաև «Պատվիրատու») Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարել է հրատապ բաց մրցույթ (Գնման ընթացակարգի ծածկագիր՝ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1):

2. «ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև «Մասնակից») ցանկանալով մասնակցել հայտարարված մրցույթին պատշաճ կարգով պատրաստել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և «ARMEPS» համակարգում առկա հատուկ գործիքի միջոցով 17.02.2022թ. ժամը 23:17 համապատասխան ամբողջական փաթեթը բեռնել է համակարգ:

3. «ARMEPS» համակարգում առկա հատուկ գործիքի կողմից փաթեթի բեռնման փուլում ավտոմատ կերպով Մասնակցի համակարգվում ստեղծվել է «ZIP» և «Folder»: «Folderw-ի օգնությամբ իրականացվում է հավաքված փաստաթղթերի ստուգում:

4. «ARMEPS.AM» կայքում առկա «Ներկայացված հայտերի ցուցակը» և «Հայտեր» բաժինների ոառումնասիրությունից պարզ է դառնում, որ փաթեթը բարեհաջող բեռնվել է համակարգ և համապատասխանում է ներկայացվող պահանջներին (կարգավիճակ, համընկնման արդյունք, ժամանակին ստացված):

5. Փաստաթղթերի ամբողջական փաթեթը բարեհաջող բեռնելուց հետո «ARMEPS» համակարգի կողմից Մասնակցին է ուղարկվել հայտի փաթեթի ներբեռնման մասին ավտոմատ ծանուցումը:

6. 18.02.2022թ. ժամը 12:00-ին էլեկարոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների «ARMEPS» համակարգի միջոցով տեղի է ունեցել թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1 գնման ընթացակարգով հայտերի բացումը:

7. Կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերման «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև հանձնաժողով») 18.02.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների ցանկում առկա է նաև «ՍԵՎԱՆԻ ՀԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ն:

8. Հանձնաժողովի 21.02.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.5. կետի համաձայն՝ համակարգում հայտ ներկայացրած մասնակիցների ցուցակում առկա է նաև «ՍԵՎԱՆԻ ՀԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ն, սակայն համակարգում նշված ընկերության մասով որևէ փաստաթուղթ կցված չէ:

9. Մասնակցի կողմից 18.02.2022թ. ՀՀ ֆինանսների նախարարությանն է ուղարկվել գրություն (այսուհետ՝ նաև «Գրություն»), որով վերջինս խնդրել է տրամադրել պարզաբանում թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված հրատապ բաց մրցույթի ժամանակ ներկայացված փաստաթղթերի հետ առաջացած խնդիրների վերաբերյալ:

10. Գրությանն ի պատասխան Ընկերությունը ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել է պարզաբանում, առ այն, որ Գրության մեջ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը բեռնվել է համակարգ, առկա է համակարգում (կցվում է), սակայն այն չի ապակոդավորվում: Տվյալ դեպքում գեներացվել է սխալ բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների «ARMEPS» համակարգում ապակոդավորում իրականացնելու համար՝ հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու կամ հեռահաղորդակցման անհայտ սխալի հանգամանքով պայմանավորված: Հայտի փաթեթի ներբեռնման մասին համակարգի կողմից տրամադրած ավտոմատ ծանուցումը

փաստում է այն մասին, որ այն ներբեռնվել է համակարգ և առկա է տվյալների բազայում, սակայն քանի որ հայտը բեռնելու պահից մինչև բացման պահը՝ համակարգի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված, այն ունի սահմանափակ հասանելիություն՝ վերջինիս պիտանելիությունը պարզվում է միայն բացումից հետո՝ ապակոդավորման արդյունքում:

11.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տրամադրված պարզաբանումը հստակ չեր և արդյունքում լրացուցիչ հարցերի վերաբերյալ պարզաբանում ստանալու անհրաժեշտություն էր առաջացել, 24.02.2022թ. Մասնակցի ներկայացուցիչ Լիանա Բրսոյանի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել թիվ ԼԲ-24/02-1771/22 հարցումը:

12. Հարցման պատասխանը մինչ օրս չի ստացվել ոչ Մասնակցի, ոչ էլ ներկայացուցչի կողմից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«Սույն, օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինեթ հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավա-սարություն»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք»:

Տվյալ դեպքում 03.02.2022թ. Պատվիրատուն Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների

համար կենտրոնացված կարգով սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարել է հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու համար «ՍԵՎԱՆԻ ՀԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում «ARMEPS» համակարգի միջոցով ներկայացրել է հայտ՝ կից փաստաթղթերով:

Ներկայացված փաստաթղթերի փաթեթը հաջողությամբ բեռնվել է համակարգ, ինչը հաստատվում է մի շարք ապացույցներով, մասնավորապես՝ «ARMEPS» համակարգի կողմից Մասնակցին ուղարկված հայտի փաթեթի ներբեռնման մասին ավտոմատ ծանուցմամբ, Մասնակցի համակարգվում համակարգի կողմից ավտոմատ ստեղծված «Folder»-ով, որը պարունակում է էլեկտրոնային ստորագրության միջոցով հաստատված փաստաթղթերի ամբողջական փաթեթը, «ARMEPS.AM» կայքում առկա «Ներկայացված հայտերի ցուցակը» բաժնի քաղվածքով, որից հստակ երևում է, որ փաթեթը բարեհաջող բեռնվել է համակարգ և համապատասխանում է ներկայացվող պահանջներին և Մասնակցի 18.02.2022թ. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղարկված գրությանն ի պատասխան ստացված պարզաբանմամբ, որի համաձայն թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգին Մասնակցի ներկայացված հայտի փաթեթը բեռնվել է համակարգ և առկա է համակարգում (կցվում է): Պետք է նշենք նաև, որ այլ կազմակերպությունների կողմից այլ մրցույթներով փաթեթների բեռնման ժամանակ սխալ փաստաթղթեր կցվելուց համակարգը թույլ չի ավել դրանք ներբեռնել համակարգ և ուղարկել է այդ մասին ծանուցում, ինչը նույնպես հաստատում է այն փաստը, որ խնդիրն առաջացել է Մասնակցի գործողություններից անկախ:

Անհայտ պատճառներով Հանձնաժողովի 21.02.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.5. կետով նշվել է, որ «ՍԵՎԱՆԻ ՀԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ի մասով որևէ փաստաթուղթ կցված չէ:

Հարկ ենք համարում նշել նաև, որ «ՍԵՎԱՆԻ ՀԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ի կողմից 9-րդ և 45-րդ չափաբաժինների համար առաջարկվել էր ամենացածր գինը և վերջինս էլ պետք է ճանաչվի հաղթող: Հատկանշական է նաև, որ քանի որ «Հադրութ 1» ՍՊԸ-ի հայտը պետք է մերժվի գնառաջարկի սխալ հաշվարկի պատճառով, «ՍԵՎԱՆԻ ՀԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ն ի թիվս 9-րդ և 45-րդ չափաբաժինների պետք է հաղթող ճանաչվի նաև 10-րդ չափաբաժնում:

Նման պայմաններում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ Պատվիրատուն պայմանագիր կնքի անհամեմատ բարձր գին առաջարկած մասնակցի հետ և արդյունքում կրի վնասներ:

Ասվածից հետևում է, որ համակարգում տեղի ունեցած տեխնիկական խնդիրների պատճառով, որոնք առաջացել են անկախ Մասնակցի գործողություններից, վերջինս զրկվել է

իր մասնակցության իրավունքի իրացման հնարավորությունից և արդյունքում, սույն հարցը Մասնակցի օգտին չլուծվելու դեպքում ինչպես Մասնակիցն, այնպես էլ Պատվիրատուն կկրեն վնասներ:

Ամփոփելով վերոգրյալը, պետք է փաստենք, որ ստեղծված իրավիճակում անհիմն խախտվում և սահմանափակվում է «ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցության իրավունքը:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել Հանձնաժողովին չեղյալ հայտարարել 9-րդ, 10-րդ և 45-րդ չափաբաժինների մասով մրցույթը, կամ
2. Պարտավորեցնել Հանձնաժողովին ընդունված համարել «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից թիվ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված փաստաթղթերը և գնահատել ներկայացված հայտը:

4. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 23.02.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/3173-2022 և 09.03.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/3969-2022 գրություններով դիմել է Երևանի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ-ի և «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից համապատասխանաբար 23.02.2022թ.-ին և 07.03.2022թ.-ին ներկայացված բողոքների վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը:

Պատվիրատուն 25.02.2022թ.-ի թիվ 02/61-24617 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր 23.02.2022 թվականի գրության «Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ-ի կողմից (այսուհետ՝ Բողոքաբեր) 23.02.2022 թվականին ներկայացրած բողոքի վերաբերյալ, տեղեկացնում եմ հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից 03.02.2022թ. հրապարակված «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով Երևանի ենթակայությամբ մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի գնման ընթացակարգի շրջանակներում 12.02.2022թ. Բողոքաբերի կողմից ներկայացվել է հրավերի վերաբերյալ պարզաբանման պահանջ:

«Գնումների մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ «Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 32-րդ հոդվածի.

2-րդ մասի համաձայն՝ «Եթե այդ գործողությունը պետք է կատարվի որևէ կազմակերպությունում կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ մարմնում կամ կազմակերպությունում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները»:

4-րդ մասի համաձայն «Եթե ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բողոքաբերի հարցումը ներկայացվել է ոչ աշխատանքային օր, իսկ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում՝ ուստի վերը նշված իրավանորմերի համաձայն, սույն դեպքում փաստացի հարցման ստանալու օրն է համարվում հաջորդող աշխատանքային օրը, այսինքն 14.02.2022 թվական, իսկ պարզաբանումը տրամադրվել է 15.02.2022 թվականին պահպանելով օրենսդրական պահանջը:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի այն պնդմանը, որ պատվիրատուի ոչ ճիշտ աշխատանքի պատճառով Ա/Ձ Արփինե Ռազմիկի Կարապետյանը չի կարողացել մասնակցել նիստին, քանի որ գնային առաջարկի ձևավորումը կախված էր պատվիրատուի պարզաբանումից, ապա՝ նշված պնդման մասով վերջինիս կողմից չի ներկայացվել որևէ ապացուցողական փաստարկներ:

Ավելին, հասկանալի չէ Բողոքաբերի պահանջը, ամբողջությամբ դադարեցնել գնման ընթացակարգը, այն դեպքում որ վերջինս մասնակցել է գնման ընթացակարգի տարբեր չափաբաժիններին և որոշ չափաբաժինների մասով ներկայացվել է նվազագույն գնային առաջարկներ և որպես հետևություն մեր կարծիքով, վերջինիս գործողությունները ուղղված են գնման ընթացակարգը տապալելուն:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:»:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 03.02.2022թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 18.02.2022թ.-ին:

ii. www.gnumner.am համացանցային կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 12.02.2022թ.-ին ներկայացված հարցադրման պարզաբանման հայտարարությունը հրապարակվել է 15.02.2022թ.-ին:

iii. https://armeps.am/ppcm/ կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ն, սակայն վերջինիս հայտի փաթեթը հնարավոր չէ բացել:

iv. «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից 18.02.2022թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարությանն է ուղարկվել գրություն, որով վերջինս խնդրել է տրամադրել պարզաբանում թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված հրատապ բաց մրցույթի ժամանակ ներկայացված փաստաթղթերի հետ առաջացած խնդիրների վերաբերյալ:

v. ՀՀ ֆինանսների նախարարությունն ի պատասխան Ընկերություն 1-ի գրության 18.02.2022թ.-ի թիվ ՍՀԳ-Ν-0007 համարի գրությամբ հայտնել է, որ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը բեռնվել է համակարգ, առկա է համակարգում (կցվում է), սակայն այն չի ապակոդավորվում: Տվյալ դեպքում գեներացվել է սխալ բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների «ARMEPS» համակարգում ապակոդավորում իրականացնելու համար՝ հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու

կամ հեռահաղորդակցման անհայտ սխալի հանգամանքով պայմանավորված: Հայտի փաթեթի ներբեռնման մասին համակարգի կողմից տրամադրած ավտոմատ ծանուցումը փաստում է այն մասին, որ այն ներբեռնվել է համակարգ և առկա է տվյալների բազայում, սակայն քանի որ հայտը բեռնելու պահից մինչև բացման պահը՝ համակարգի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված, այն ունի սահմանափակ հասանելիություն՝ վերջինիս պիտանելիությունը պարզվում է միայն բացումից հետո՝ ապակոդավորման արդյունքում:

vi. ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից 24.03.2022թ.-ին տրամադրված թիվ 22-0028Պ համարի փորձագետի եզրակացության (այսուհետ նաև՝ Եզրակացություն) «հետևություններ» բաժնի 1.5 կետի համաձայն՝ փորձաքննությանը ներկայացված համակարգչում թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտի փաթեթը ստեղծվել է 2022 թվականի փետրվարի 17-ին, ժամը՝ 23:14:52-ին: Հայտը ստեղծված է մրցույթի 9-րդ, 10-րդ և 45-րդ չափաբաժիններին մասնակցության համար, հայտի փաթեթին կցված են թվով 6 ֆայլեր՝ «Պիտանելիության չափորոշիչներ/Պիտանելիության բաժին» մասում կցված են թվով 3 ֆայլեր՝ «1643872958741» անվանումով արխիվային «rar» ձևատեսակի, «1643873252710» և «1643873329093» անվանումներով տեքստային «pdf» ձևատեսակի, մրցույթի 9-րդ, 10-րդ և 45-րդ չափաբաժինների գնային առաջարկ բաժիններին կցված են մեկական «pdf» ձևատեսակի ֆայլեր՝ համապատասխանաբար «16438734575361», «16438740656151» և «16438740504371» անվանումներով: Նշված ֆայլերը տրամադրվում են սույն եզրակացության անբաժանելի մասը կազմող «22- 0028Պ» ձեռագիր գրառմամբ լազերային սկավառակի «Haytin kcvac fayler» անվանումով պանակի համապատասխան ենթաբաժիններում:

Համաձայն «ARMEPS» համակարգում առկա տեղեկատվության և «sevanhac@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեին «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված էլեկտրոնային նամակում պարունակվող տեղեկատվության՝ «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար ստեղծված փաթեթը «ARMEPS» համակարգ վերբեռնվել է 2022 թվականի փետրվարի 17-ին, ժամը՝ 23:17-ին: Հարկ է նշել, որ «ARMEPS» համակարգում «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի օգտահաշվում՝ ԵՔ-ՀԲԱԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության համար վերբեռնված հայտի փաթեթի, «Կարգավիճակ», «Թ/Ս համընկնման արդյունքը», «ժամանակին ստացված» և «Հայտը բացվեց» դաշտերում առկա են «Բոլոր ներկայացված

նյութերն/Հաշ համընկնում են» նշումները, ինչը մատնանշում է տվյալ դաշտերին վերաբերող գործողությունների բնականոն ընթացքը:

«Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության համար «ARMEPS» համակարգ վերբեռնված հայտի փակ փաթեթում պարունակվող տեղեկատվությունը հետազոտել չի հաջողվել փաթեթի կոդավորված լինելու և ապակոդավորման ալգորիթմի բացակայության պատճառով, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ փորձաքննությանը տրամադրված համակարգում առկա հայտի փաթեթը և «ARMEPS» համակարգից ներբեռնված հայտի փաթեթը համընկնում են (փաթեթների MD5 տեսակի անհատականացման արժեքները և ծավալները համընկնում են), կարելի է պնդել, որ «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության համար «ARMEPS» համակարգ վերբեռնված հայտի փակ փաթեթում նույնպես պարունակվում են վերոնշյալ թվով 6 ֆայլերը, որոնք տրամադրվում են սույն եզրակացության անբաժանելի մասը կազմող՝ «22-0028Պ» ձեռագիր գրառմամբ լազերային սկավառակի «Haytin kcvac fayler» անվանումով պանակի համապատասխան ենթաբաժիններում:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ-ի կողմից 23.02.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման, իսկ «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից 07.03.2022թ.-ին ներկայացված համանման բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, իսկ փակ մրցույթի դեպքում հարցման և պարզաբանումների բովանդակության մասին պարզաբանումը տրամադրվում է հրավեր ստացած մասնակիցներին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:

Նույն հոդվածի 2-րդ համաձայն՝ եթե այդ գործողությունը պետք է կատարվի որևէ կազմակերպությունում կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ մարմնում կամ կազմակերպությունում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները:

Վերոգրյալ իրավական նորմերի լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերի պարզաբանում տրամադրելու մասին գրավոր հարցում կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում: Ընդ որում, հարկ է նկատել, որ սույն դեպքում «ստանալ» եզրույթն իրենից ենթադրում է հարցմանը ծանոթանալու հնարավորության փաստացի եղանակ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հրավերի վերաբերյալ 12.02.2022թ.-ին ստացված հարցադրումների պարզաբանումները տրամադրել է 15.02.2022թ.-ին:

Վերոնշյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Օրենքի 29-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում, քանի որ 12.02.2022թ.-ը ոչ աշխատանքային օր է, ինչի պարագայում Հանձնաժողովն օբյեկտիվորեն չէր կարող պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ ներկայացված գրությունը ստանալ:

Անդրադառնալով համանման բողոքով ներկայացված փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը փաստում է հետևյալը.

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից հաստատած դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան (որոշ բացառություններով), ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության

քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է

քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Սույն գործի փաստերի համաձայն՝ https://armeps.am/ppcm/ կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ն, սակայն վերջինիս հայտի փաթեթը հնարավոր չէ բացել:

«Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից 18.02.2022թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարությանն է ուղարկվել գրություն, որով վերջինս խնդրել է տրամադրել պարզաբանում թիվ «ԵՔ-ՀԲԱԱՊՁԲ-22/1» ծածկագրով սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված հրատապ բաց մրցույթի ժամանակ ներկայացված փաստաթղթերի հետ առաջացած խնդիրների վերաբերյալ:

Գրությանն ի պատասխան Ընկերություն 1-ը ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել է պարզաբանում, առ այն, որ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը բեռնվել է համակարգ, առկա է համակարգում (կցվում է), սակայն այն չի ապակոդավորվում: Տվյալ դեպքում գեներացվել է սխալ բանալի, որը պիտանի չէ էլեկտրոնային գնումների «ARMEPS» համակարգում ապակոդավորում իրականացնելու համար՝ հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու կամ հեռահաղորդակցման անհայտ սխալի հանգամանքով պայմանավորված: Հայտի փաթեթի ներբեռնման մասին համակարգի կողմից տրամադրած ավտոմատ ծանուցումը փաստում է այն մասին, որ այն ներբեռնվել է համակարգ և առկա է տվյալների բազայում, սակայն քանի որ հայտը բեռնելու պահից մինչև բացման պահը՝ համակարգի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված, այն ունի սահմանափակ հասանելիություն՝ վերջինիս պիտանելիությունը պարզվում է միայն բացումից հետո՝ ապակոդավորման արդյունքում:

ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից 24.03.2022թ.-ին տրամադրված թիվ 22-0028Պ համարի փորձագետի եզրակացության (այսուհետ նաև՝ Եզրակացություն) «հետևություններ» բաժնի 1.5 կետի համաձայն՝ փորձաքննությանը ներկայացված համակարգչում թիվ «ԵՔ-ՀԲԱԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտի փաթեթը ստեղծվել է 2022 թվականի փետրվարի 17-ին, ժամը՝ 23:14:52-ին: Հայտը ստեղծված է մրցույթի 9-րդ, 10-րդ և 45-րդ չափաբաժիններին մասնակցության համար, հայտի փաթեթին կցված են թվով 6 ֆայլեր՝ «Պիտանելիության չափորոշիչներ/Պիտանելիության բաժին» մասում կցված են թվով 3 ֆայլեր՝ «1643872958741» անվանումով արխիվային «rar» ձևաչափի, «1643873252710» և «1643873329093» անվանումներով տեքստային «pdf» ձևաչափի, մրցույթի 9-րդ, 10-րդ և 45-րդ չափաբաժինների գնային առաջարկ բաժիններին կցված են մեկական «pdf» ձևաչափի ֆայլեր՝ համապատասխանաբար «16438734575361», «16438740656151» և «16438740504371» անվանումներով: Նշված ֆայլերը տրամադրվում են սույն եզրակացության անբաժանելի մասը կազմող «22- 0028Պ» ձեռագիր գրառմամբ լազերային սկավառակի «Haytin kcvac fayler» անվանումով պանակի համապատասխան ենթաբաժիններում:

Համաձայն «ARMEPS» համակարգում առկա տեղեկատվության և «sevanhac@mail.ru» էլեկտրոնային փոստի հասցեին «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված էլեկտրոնային նամակում պարունակվող տեղեկատվության՝ «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից թիվ «ԵՔ-ՀԲԱԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար ստեղծված փաթեթը «ARMEPS» համակարգ վերբեռնվել է 2022 թվականի փետրվարի 17-ին, ժամը՝ 23:17-ին: Հարկ է նշել, որ «ARMEPS» համակարգում «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի օգտահաշվում՝ «ԵՔ-ՀԲԱԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության համար վերբեռնված հայտի փաթեթի, «Կարգավիճակ», «Թ/Ս համընկնման արդյունքը», «ժամանակին ստացված» և «Հայտը բացվեց» դաշտերում առկա են «Բոլոր ներկայացված նյութերն/Հաշ համընկնում են» նշումները, ինչը մատնանշում է տվյալ դաշտերին վերաբերող գործողությունների բնականոն ընթացքը:

«Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից «ԵՔ-ՀԲԱԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության համար «ARMEPS» համակարգ վերբեռնված հայտի փակ փաթեթում պարունակվող տեղեկատվությունը հետազոտել չի հաջողվել փաթեթի կոդավորված լինելու և ապակոդավորման ալգորիթմի բացակայության պատճառով, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ փորձաքննությանը տրամադրված համակարգում առկա հայտի փաթեթը և «ARMEPS» համակարգից ներբեռնված հայտի փաթեթը համընկնում

են (փաթեթների MD5 տեսակի անհատականացման արժեքները և ծավալները համընկնում են), կարելի է պնդել, որ «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից «ԵՔ-ՀԲԱԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության համար «ARMEPS» համակարգ վերբեռնված հայտի փակ փաթեթում նույնպես պարունակվում են վերոնշյալ թվով 6 ֆայլերը, որոնք տրամադրվում են սույն եզրակացության անբաժանելի մասը կազմող՝ «22-0028Պ» ձեռագիր գրառմամբ լազերային սկավառակի «Haytin kcvac fayler» անվանումով պանակի համապատասխան ենթաբաժիններում:

Վերոնշյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա, մասնավորապես՝ ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.02.2022թ.-ի թիվ ՍՀԳ-N-0007 համարի գրությունն ու ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից 24.03.2022թ.-ին տրամադրված թիվ 22-0028Պ համարի փորձագետի եզրակացությունը՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և պետք է այն բավարարել գնման ընթացակարգը՝ 9-րդ, 10-րդ և 45-րդ չափաբաժինների մասով, չկայացած հայտարարելու պահանջի մասով՝ վերականգնելով Ընկերության գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքը, որի արդյունքում կապահովվի Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Անդրադառնալով համանման բողոքով ներկայացված մյուս՝ կամընտրանքային պահանջին՝ Բողքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ այն անհիմն է, քանի որ Եզրակացությամբ հստակ և կատեգորիկ հետևություններ ու եզրահանգումներ չի արվել փորձագետներին առաջադրված հարցի վերաբերյալ, մասնավորապես՝ ի՞նչ փաստաթղթեր է պարունակում «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից թիվ «ԵՔ-ՀԲԱԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար ստեղծված փաթեթի վերաբերյալ չի տրվել կատեգորիկ եզրակացություն, այլ փորձագետը փաստել է, որ **«կարելի է պնդել»**, որ «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից «ԵՔ-ՀԲԱԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության համար «ARMEPS» համակարգ վերբեռնված հայտի փակ փաթեթում նույնպես պարունակվում են վերոնշյալ թվով 6 ֆայլերը:

Ընդ որում փորձագետն ինքն է փաստում, որ «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից «ԵՔ-ՀԲԱԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության համար

«ARMEPS» համակարգ վերբեռնված հայտի փակ փաթեթում պարունակվող տեղեկատվությունը հետազոտել չի հաջողվել՝ փաթեթի կոդավորված լինելու և ապակոդավորման ալգորիթմի բացակայության պատճառով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արփինե Ռազմիկի Կարապետյան» Ա/Ձ-ի կողմից 23.02.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/23 ծածկագրով բողոքը մերժել:

«Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի կողմից 07.03.2022թ.-ին ներկայացված համանման բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը՝ 9-րդ, 10-րդ և 45-րդ չափաբաժինների մասով, հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**